Հավելված N4
Երևանի քաղաքապետի
22. 11. 2021 թ.
հ.4153-Ա որոշման

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՈՄՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕՊԵՐԱՏՈՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԲԱՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ՀԱՅՏԻ ՁԵՎ

_____հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված հասարակական տրանսպորտի միասնական տոմսային համակարգի ներդրման և ֆինանսական օպերատոր ընտրելու բաց հրապարակային մրցույթին և հրապարակային ծանուցմանը համապատասխան ներկայացնում է սույն դիմումը և դրան կից հայտը:

Դիմումատուն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է _____ ռեզիդենտ:

երկրի անվանումը

Դիմումատուի՝

հարկ վճարողի հաշվառման համարն է՝ _____

էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____

գործունեության հասցեն է՝ _____

հեռախոսահամարն է՝ _____

Սույնով դիմումատուն հայտարարում և հավաստում է, որ բավարարում է մրցույթի մասնակցության իրավունքի պահանջներին հավաստում է, որ մրցույթին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված դիմումատուին փոխկապակցված անձանց և (կամ) դիմումատուի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս դիմումատուին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

Կից ներկայացվում է դիմումատուի կողմից լրացված հայտը:

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը) Կ. Տ.